«Սիրտ-թոքային վերակենդանացման ընդլայնված սիրտ-անոթային կենսապահովում»

2023 թվականից կրկնողաբար Երևան քաղաքում «Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոն»-ի կողմից կանցկացվի «Սիրտ-թոքային վերակենդանացման ընդլայնված սիրտ-անոթային կենսապահովում» թեմայով ուսումնավարժական դասընթացը: Ծրագիրը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով: Թիրախային լսարանը՝ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգներ, սրտաբաններ, շտապ և անհետաձգելի բժշկության բժիշկներ և բուժքույրեր, բուժքույր-անեսթեզիստներ, ինտենսիվ բուժքույրեր, սրտաբանության և նյարդաբանության բուժքույրեր: Մասնակիցներին կշնորհվի ՇՄԶ 6 տեսական և 15 գործնական կրեդիտ: Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարել 093177717 հեռախոսահամարով:

ԾՐԱԳԻՐ

«ՍԻՐՏ-ԹՈՔԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՍԻՐՏ-ԱՆՈԹԱՅԻՆ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2023թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոն», Տիտոգրադյան փ.14, «Էրեբունի» բժշկական կենտրոն)

«Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոն»

Օր 1		
09:00-11:00	**Դասախոսություն** Ընդլայնված սիրտ-անոթային կենսապահովում. ԷՍԳ ռիթմերի վերլուծություն: ԸՍԿԱ հիմնական դեղորայքը, ներմուծման ուղիները	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
11:00-13:00	**Դասախոսություն** ԸՍԿԱ համակարգված մոտեցմամբ գնահատման առանձնահատկությունները: Արդյունավետ թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները: Հայաստանի հանրապետությունում ներ- և արտահիվանդանոցային պայմաններում սրտի կանգի, STEMI և Կաթվածի բուժօգնության համակարգերը	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
13:00-14:00	Ընդմիջում	
14:00-17:00	**Գործնական աշխատանք**	Հասմիկ Քոչարյան/

	ԸՍԿԱ շնչառության կանգի ժամանակ: Շնչուղիների անցանելիության ապահովում: Օրոֆարինգեալ և նազոֆարինգեալ օդատարների տեղադրում: Շնչուղիների պարունակության արտածծում: Լրացուցիչ թթվածնի մատակարարման եղանակներ: Արհեստական շնչառության մատակարարման եղանակներ: Ընդլայնված շնչուղիներով արհեստական շնչառություն: Վնասվածքով հիվանդների վարման առանձնահատկությունները: Շնչառության արդյունավետության գնահատման չափանիշները և գործիքակազմը	Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
Օր 2		
09:00-13:00	**Գործնական աշխատանք** ԸՍԿԱ փորոքների թելիկախաղի (ՓԹ) / առանց անոթազարկի փորոքային հաճախասրտության (ՓՀ) ժամանակ: Մանուալ դեֆիբրիլացիայի տեխնիկան տարբեր էլեկտրոդների կիրառմամբ /փափուկ և կոշտ/: Կիրառվող դեղորայքը, ներմուծման ուղիները: Վերակենդանացման միջոցառումների ընթացքում մոնիթորինգի իրականացումը: ԸՍԿԱ առանց անոթազարկի էլեկտրական ակտիվության ժամանակ: ԸՍԿԱ ասիստոլիայի ժամանակ	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
13:00-14:00	Ընդմիջում	
14:00-17:00	**Գործնական աշխատանք** ԸՍԿԱ հազվասրտության ժամանակ: Սիմպտոմատիկ հազվասրտություն: Սրտախթանիչների /կարդիոստիմուլատորների/ կիրառումը: ԸՍԿԱ անկայուն հաճախասրտության ժամանակ: Կարդիովերսիայի տեխնիկան: ԸՍԿԱ կայուն հաճախասրտության ժամանակ	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
Օր 3		
09:00-11:00	**Գործնական աշխատանք** ԸՍԿԱ սուր կորոնար համախտանիշների ժամանակ: Իշեմիայի կամ ինֆարկտի հետ կապված ախտանշանները, կլինիկական վատթարացման նշանները: Ընդունող հաստատության նախապատրաստումը: Բուժօգնության կազմակերպումը՝ ըստ ST-սեգմենտի շեղումների	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
11:00-13:00	**Դասախոսություն** ԸՍԿԱ ինսուլտի /կաթվածի/ ժամանակ: Կաթվածի հիմնական տեսակները, կլինիկական արտահայտությունները: Կաթվածի բուժման նպատակները: Կրիտիկական կարևոր ժամանակահատվածները: Արագ գնահատման միջոցառումները: Ներհիվանդանոցային բուժօգնության կազմակերպումը՝ ըստ ժամանակացույցի: Բուժօգնության տեսակները	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
13:00-14:00	Ընդմիջում	
14:00-17:00	**Գործնական աշխատանք** ԸՍԿԱ առանձնահատկությունները ջրահեղձման, հիպոթերմիայի, օպիատներով թունավորումների, անաֆիլաքսիայի դեպքում, հղիների մոտ: Երկարատև ԸՍԿԱ պայմանները: Հետվերակենդանացման շրջանի բուժօգնություն	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա

Թիրախային լսարան՝ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգներ, սրտաբաններ, շտապ և անհետաձգելի բժշկության բժիշկներ և բուժքույրեր, բուժքույր-անեսթեզիստներ, ինտենսիվ բուժքույրեր, սրտաբանության և նյարդաբանության բուժքույրեր:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 24 հոգի